

ՏԱԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Պուշկարիոյ համար	12
Տարեկան	6
Վեցամսեայ	15
Վեցամսեայ	8

Աւերիկայի համար	3
Տարեկան	1.50
Վեցամսեայ	0.75

Մանուգրեւն տոյր սուս
իին երեսն համար 40 ս.
իսկ վերջին երեսն հա-
մար 20 սակրիւ է. երե-
սն աւելի անգամներու
համար 20 0/0 զեղջ կըլ
ըստ
Վառնայի համար մի օր 10 սակրիւ

ՇԱՐՇՈՒՄ

ՄԱՅԻՐ ԱՋԳԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ

Նախկին և նորապէս
հարկաւորութեան հա-
ցիւն

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie)

Արտատպութեան համար
մեկ օր
(20 ՄԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ համար
մեկ օր
(15 ՄԱՆԹԻՄ)

Գրութիւնք և յեն տրուի

ՇԱՐՇՈՒՄԻ ԲԱԾԱՆՈՒԹՅԱՆ ԳՐՈՒՆԴԸ ԲԱԾԱՆԵՐԸ ՊԵՏՐՎԱՐ ԿՆԱՐԻ ԿՆԱՐԻ

ՄԱՅԻՐ ԱՋԳԱՅԻՆ

Մեր բաժանորդներուն կը յիշեց-
նենք, որ ներկայ փետրվար 1-ին
լրացաւ Շարժումի բաժանորդագ-
րական տարեշրջանը և կը խնդրենք
անոնցմէ, որ փութացնեն բաժնե-
զիններու վճարումը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ մեր բաժանորդները
պէտք է զրամները ուղղակի մեզ ու-
ղարկեն:

Դիւրութեան համար անոնք կարող
են վառնայի Ազգ. պահպանչն գանձե-
լի 15 Քր.ի (3 տու.) շէքեր ուղարկել:
ՊԱՐՍՅԱՍՏԱՆԻ բաժանորդները
զերուութեան համար կարող են ուս-
սական թղթագրամ զրկել պահպանչ-
րուած նամակներու մէջ: Թուսական
փողի հաշուով 6 րուպիէ է Շարժում-
ի տարեկան բաժնեգինը:

Ստիպուած ենք նորէն կրկնել, որ
Շարժումի բաժանորդագրութիւնը
կանխիկ է եւ իր հասցէին հետ բաժ-
նեգինն ալ չը զրկողներու գիտում-
ները անհետեւանք կը մնան:

Քէօսթէնէն մեր գործակալն
է Պ. Գրիգոր Կարապետեան:

Սյդ տեղի մեր բաժանորդնե-
րէն կը խնդրուի իրենց հաշիւը
վճարել նոյն պարոնին:

ՄԻԼԻՊԵՆԻ ՀԱՅ ՀԱՍՍԱԿՈՒԹԵԱՆ

Պերս. Կրմէնիայի խմբագիր,
հանրաժանութի հայասէր Պ. Պիէր
Քիլորի և Հ. Յ. Կաշնակցութեան
եւրոպական պրօպագանդիստ
կայացուցիչ տօքթ. Յ. Լօրիս. Մէ-
լիքովի կողմէ քաղցր պարտակա-
նութիւն մը ունիմ շնորհակալու-
թիւն յայտնելու Ֆիլիպէի հայ
հասարակութեան, թաղ. խոր-
հուրդի և ժողովրդեան, յարգելի
ներկայացուցիչներուն, որոնք
այնքան ջերմ ընդունելութիւն մը
ըրին մեր հիւրներուն:

Մեր սիրելի ընկերներուն խօս-
քը ամէն բացատրութեան աւելի
ազգու է, ուստի իմ վրայ տըր-
ուած պարտականութիւնը կատա-
րած կը համարիմ իրենց ինձ ու-
ղարկած նամակի հայերէն թարգ-
մանութիւնը ներկայացնելով
Պատ. հայ հասարակութեան:

Կ. Պիտեան
25/12 փետր. 1904
Ֆիլիպէ

Մօֆիա 24 փետր. 1904

Սիրելի ընկեր,

Խնդրենք, հաճեցէք մեր զգա-
ցումներուն թարգմանը ըլլալ թա-
ղական խորհուրդի և Ֆիլիպէի
հայ հասարակութեան ներկայ-
ցուցիչներու քով, որոնք կիրակի
և երկուշաբթի օր մեզ անմոռա-
նալի ընդունելութիւն մը ըրին:
Խորապէս զգացուած և յուզուած
ենք: Մենք ունեցանք նաև տը-
խուր հաճոյքը սեղմելու Պետրոս
Սիրէմճեանի հօր ձեռքը: Սյդ-
վայրկեանները անջինջ պիտի մը-
նան մեր յիշողութեանց մէջ:

Հաճեցէք ուրեմն, յայտնել ա-
մենուն մեր խորին շնորհակալու-
թիւնը և հաւատացէք մեր ան-
կեղծ անձնուիրութեան:

Պիլիք Քիլորի տօքթ. Յ. Լօրիս. Միլիպով

ՅԵՂԱՓՈՒՍԻԹԻԻՆԸ ՌՈՒՍԻՈՑ ՍԷՋ

Տեսնենք թէ ուս. յեղափոխա-
կան շարժման հիմք ըլլալով հան-
գեքձ սօցիալիզմը անոնք իրա-
կանութեան պահանջներուն առ-
ջիւ տեղի տուին և սօցիալ տե-
մօկրատները իրենց երկրորդ
ընդհանուր ժողովին մէջ իրենի
մտաւոր նպատակ ընդունցին
ցորիզմի տապալումը ու ռամկա-
վարական հանրապետութեան մը
հաստատումը: Սօցիալ. տեմօկ-
րատիայի երկրորդ ընդհ. ժողովը
ուսական յեղափոխութեան զար-
գացման տեսակետով նշանաւոր
երեւոյթ մը կը ներկայացնէ:
Յեղափոխականները ինքզինք
նին այնքան ուժեղ կը զգային,
որ այդ ժողովը տեղի ունեցած է
—ինչպէս կը հաստատեն— ըստ
իսկ Թուսաստանի մէջ: Այնտեղ
մշակուած է վերջնական ծրագիր
մը, ձայներու մեծամասնութեամբ
ընդունուած: Օրակարգի վրայ
ի հարկէ գրուած էր և այն հար-
չը, որու մասին առաջ արդէն
այնքան վիճարանութիւններ ե-

ղած էին, որը այլևս հասունա-
ցած կը համարուէր և որու լուծ-
ման պատմական անհրաժեշտու-
թիւնը մենք նախորդիւ ցոյց
տուինք—այդ էջ ազգայնական
հարցը: Ի՞նչ գիրք բռնել Թու-
սաստանի մէջ ապրող օտար ազ-
գութիւններու հանդէպ: Ձընա-
յելով Պլէխանովի, «Իսկրայի
վարիչներու և այլոց մինչև այն
ատեն ցոյց տուած ընդդիմու-
թեան, համաժողովը ինկատի առ-
նելով հարցի վերին աստիճանի
ընդդիմութիւնը երկար ատեն կանգ
առած է անոր վրայ և գտած է
շատ յաջող լուծում՝ ծրագրին
մէջ ընդունելով օտար ազգերու
համար ինքնավարութիւն:

Այս պահանջը վաղուց գրեթէ
ին Լեհաստանը և ուս. յեղափոխա-
կաններուն առջիւ: Վերջերս
նոյնը շեշտեցին և հայ սօցիալիստ
ները պահանջելով կողմասի հա-
մար անկախ ինքնավարութիւն:

Այն թեմայի վերաբերեալ զեռ
կը յիշեն «Շարժումի» պարա-
նէն լոյս տեսած «Ճանճեր ու Պար-
գերս» պրօշիւրը, որու մէջ Հա-
յոց առանձին պահանջները ման-
րամասնօրէն շեշտուած են:

Աւելորդ չենք համարիր ուս.
սօցիալ տեմօկրատներու ծրագրի
մէջ օտար ժողովուրդներու վե-
րաբերել ընդունուած յօդուած-
ներու կամարը հոս ստալ բերել:

1. Տեղական ինքնավարութիւն
տարբեր ազգաբնակչութիւններու
համար:
2. Օրէնքի առջիւ իրաւունք-
ներու կատարելու հաւաստու-
թիւն:
3. Խղճի ազատութիւն, ազա-
տութիւն իր մայրենի լեզուով
կրթութիւն ստանալու:
4. Գործածում մայրենի լեզ-
ուի պնտական հիմնարկութիւն-
ներու մէջ (գատարաններու,
կառավարական շրջանակներու
են):

Այսպէս այժմ ուսերը իրենք,
ինչ գիրք բռնած են օտար յե-
ղափոխականները գէպի ուսերը
Հրէաստանի գիրքը յայտնի է:
Իրեն անհայրենիք ժողովուրդ-

անոնք ի հարկէ պիտի միանային
Թուսաստանի Սօցիալ. տեմօկրա-
տիայի հետ ներկայ ընթացի տա-
պալելու համար: Թուսաստանի
Սօցիալ Տեմօկրատիա և ոչ թէ
ուսական սօցիալ տեմօկրատիա:
Երկրորդ ընդհանուր ժողովին մէջ
ուս. սօցիալ տեմօկրատները այս
անունը տուած են իրենց կուսակ-
ցութեան, իհարկէ կայսրութեան
մէջ ապրող զանազան օտար ազ-
գութիւններու սօցիալիստ ար-
բերը իրենց մէջ ձուլելու համար,
և ի՞նչու չը ձուլուին անոնք,
քանի որ ծրագրին մէջ ընդուն-
ուած է տեղային ընդարձակ
ինքնավարութիւն: Բայց ծրագ-
րին մէջ նշանակուելու բաւական
չէ: Ամէն մարդ գիտէ, որ ապագայ
սահմանադրական Թուստան օտար
ազգերը պիտի ենթարկէ նոյն
իրաւաւորւն ճնշման, ինչպէս այ-
սօր Սարի կառավարութիւնը,
միայն թէ, մին օրէնքով և ձայ-
ներու մեծարանութեամբ պիտի
ճնշէ. իսկ միւսը այսօր բռնի ու-
ժով և քմահաճոյքով կը ճնշէ:
Օրինակ սահմանադրական Գեր-
մանիան, որ զպրօցներ փակե-
լով, խմբական գաղթականու-
թիւններ զրկելով բռնի գերմա-
նացնել կուզէ իրեն հպատակ լե-
հերը: Այս ըսելով հանդերձ
մենք բարձր կը գնահատենք
Թուսաստանի Սօցիալ Տեմօկրա-
տիայ ծրագրային այդ փոփոխու-
թիւնը և կը նկատենք զայն յա-
ռաջիմութիւն մը, բայց մեր
գիտողութիւնները եղան օտար
յեղափոխականներու գիրքը գե-
պի ուսերը որոշելու համար:

Անոնք Լեհերը, Լեհական
կազմակերպութիւնը գրուած է
ազգային սօցիալիստական հողի
վրայ, բայց սօցիալիստներ ըլ-
լալով հանդերձ լեհերը չմիացան
ուսներու հետ, չմիացուցին ի-
րենց կասսան և նոյնիսկ ձեռն-
պահ մնացին երբ ուսերը կը
գործէին ու ցոյցեր կը սարքէին:
Անոնք իրենք իրենց մէջ կը
պարտաստուին ընդհ. ապստամ-
բութեան մը տեսնել իրեն կազմա-
կերպուած ոյժ գործող գաղթի-

հական հայրենիքը Ռուսաստանի բռնակալ լուծէն փրկելու և ժամանակի պահանջներու համեմատ ապատ և հաստանի մէջ կարգ ու կանոն մտցնելու: Որովհետեւ, ինչպէս Դաշինքի բաւ, անոնք լաւ պիտեն, որ «ժողովուրդ մը վաղ կամ ուշ պէտք է օտար տիրապետութեան լուծը թօթափէ, ապա թէ ոչ երբէք կատարեալ չի կրնար ըլլալ»:

Այսպէս Լեհերը, Ինչ գիրք բռնեցին հայ յեղափոխականները Ռուսիոյ մէջ, Հայերը դեռ նոր սկսած են կազմակերպուիլ — «Հայկ, Ինքնապաշտպանութեան կոմիտէները» կազմուեցան եկեղեցական կալուածներու գրաւումէն ետքը: Ասիկա, որ հիմա գըրաւած է ամբողջ Կովկասը, գուտ ազգային կազմակերպութիւն մըն է, և ուրեմն էր գիրքը գէպի առս յեղափոխականները շատ ուրոշ է: Մնոր անդամները իբրեւ հայ յեղափոխականներ կը պաշտպանեն իրենց տեղական շահերը ու օր մը երբ ուսերը ընդհ. ապստամբութեան նշանը ցոյց տան անոնց հետ կապուած մին Ռուսահայաստանի ազատութեան համար: Ատկէ զատ անոնք կարող են միշտ ընկերական կապեր պահել ռուս յեղափոխական մարմիններու հետ, նոյն իսկ իրենց շրջանին մէջ անոնց չզլանալ պէտք եղած ընկերական աջակցութիւնը, բայց իրենք կը մնան ինքնուրոյն մարմին առանձնաշատուկ պահանջներով, առանձնաշատուկ ծրագրով:

«Հայկ, Ինքնապաշտպանութեան կոմիտէներէն առաջ սակայն Կովկասի մէջ կազմուած են — ինչպէս տեսնուք — հայ սօցիալիստական խումբեր: Աւրախալի էր անոնց երեւան գալը, որովհետեւ անոնք անցան հայ բանաւորներու զլուրը և թոյլ չը տուին որ վերջիններս ձու-

լուին ռուս սօցիալիստական կազմակերպութիւններու մէջ: Ինչպէս լեհերը, նոյնպէս ալ հայ սօցիալիստական խումբերը կանգնեցան ազգային հոգի վրայ և իրենց ծրագրին մէջ գրին տեղային ինքնավարութեան հարցը: Սակայն եթէ ցաւալի կէտ մը կայ, այդ ալ այն է, որ անոնք ինչպէս տեսնուի մը ռուսասիրութեան մէջ բացասական դիրք բռնեցին գէպի Տաճկահայաստանի ազատութեան դործը, որու յաջոց կամ անյաջող լուծումէն կախուած է մեծամասամբ Հայութեան ըլլալու կամ չըլլալու հարցը: Այո, անոնք ցոյց կուտան ամէն համակրութիւն, բայց պղտտոնական համակրութիւնը բաւական չէ դեռ: Ամբողջ եւրոպական սօցիալ տեմոկրատիայի համակրութիւնն ալ մեր շողմն է: Պրիքսէլի միջազգային բիւրօն քանիցս կոչելի հանելով պաշտպանեց հայկական դատը, բայց հայ սօցիալիստներու համար այդ շարժումը միայն աջակցիլը անպատուաբեր է, անոնք պէտք է ցոյց տան նաեւ ակտիւ գործակցութիւն և օգնութիւն: Եւ այսպէս պիտի ըլլայ, որովհետեւ իրերու բնութիւնը այդ կէտ պահանջէ: Բանաւորը չի կարող ուրանալ իր հայութիւնը, Բոլոր հայերը, ուր որ ալ ըլլան պիտի հաւաքուին հայութեան շուրջը ու մղեն ազգային գոյութեան կռիւը, որու միջոցին անոնք պիտի կեդրոնացնեն իրենց ոյժը ամենէն շատ վտանգուած կէտերուն վրայ: Եւ այսօր այդ կէտը կը ներկայացնէ Տաճկահայաստանը:

Ռուսերը ռուսեր են և ունին իրենց առանձին շահերը, իսկ մենք Հայեր ենք և ունինք մեր առանձին շահերը: Ահա տեղակէտ մը, որով պէտք է կառավարուին կովկասահայ մեր յեղա-

փոխական ոյժերը և որոշեն իրենց գիրքը գէպի առս բողոքող տարրերը:

Մարգարեանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

«Ինքորմայ օտար մէջ կը կարգանք հետեւեալը, որ վիճենական թերթին գրուած է Կ. Պոլսէն»:

«Հայկական գաւառներու գրութիւնը լուրջ երկիւղներու տեղի կուտայ: Նորագոյն լուրերուն նայելով թիւրք պաշտօնեաները Պրիթիսի և Էրզրումի վրայէն թերեւ մէջ սկսած են տենդոտ գործունէութիւն մը, Մեծաքանակ ինքնապաշտպան զրուած են Մուշ և զէնքի տակ առնուած է Էրզրումի կանի Կրք գործարանակը, որովհետեւ Սասնոյ մէջ կը սպասուին լուրջ զէպեր: Սասնոյ լուրերն հաշակաւոր գաւառը, որ սակէ ճիշդ 10 ասրի առաջ Սուլթան Ապաիւլ Համիտի հրամանաւ եւ քաղաքակիրթ կոչուած պետութիւններու գիտութեամբ ամենամեծութեւ բարբարոզէպերու թատր գարձաւ, ինչպէս բողոքողին Հայ Գեղարքունիքի ձեռքը կը պտուի: Վերջիններս կարողացան ոչ միայն հայ ազգաբնակչութեան համակրութիւնը իրենց կողմը շահել, այլ և քիւրտներուն համակրութիւնը, այնպէս որ քրդական քանի մը ցեղապետներ բացայայտ կերպով միացած են ֆէտայիներու հետ: Ինչպէս յայտնի է, սակէ առաջ թիւրք կառավարութեան ըրած փորձերը՝ կոտորել յեղափոխականներու ոյժը և վերջնականապէս ջնջել ապստամբ լեռնցիները, մասնուցեցան ամօթալի անյաջողութեան: Իսկզբան փորձ եղաւ յեղափոխականները Սասնոյ բնակչութեան զաւակը, բայց վերջիններս անցաւ իր օրեր գաղան փորձէն իրատուած և նոր փոթորիկներէ վախճալով, օրոշցին յեղափոխական խումբերու հետ միանալ և զէնք ի ձեռին քաղաքակիրթ կէտի և Անտոք լեռներու անմատչելի բարձունքներուն վրայ, հոն ամրանալ: Թիւրք զօրք սկսաւ հետապնդել ու հալածել, բայց ապստամբներէն երկու ժամ հեռաւորութեամբ լեռան մը վրայ հասնելով հոն մնաց: Հայերը

յարձակողական գիրք բռնել չուզեցին, բայց թշնամիներն ալ յարմար դատեցին եղած տեղերին: Ինչպէս, որովհետեւ անոնք լաւ գիտէին Հայերուն ոյժը և կը վախնային պարտութիւն մը կրել:

Թշնամի բանակները 45 օր այդպէս կեցան իրարու դէմ, Թիւրքերը վերջապէս զիջեցին ներք միջոցներու և ուղեցին քրդերը Հայոց գէպ գրոտիլ, բայց այս ալ ապարդիւն մնաց, Յետոյ զօրքը հրաման ստացաւ եւ քաղաքը, Հիմա ամէն պարտաւորութիւն մը տեսնուի կատարի յարձակումը գործել, Գարնան Տաճկահայաստանի մէջ կը սպասուին ամէն լուրջ և երկիւղալի գէպեր: Տեղի պիտի ունենայ կոտորած մը կամ ապստամբութիւն մը և կամ երկուքը մէկէն: Թիւրքան քաղաքներու նայաքոյն Արեւելքի գէպերն և պետութիւններու անդործունէութեան պիտի փորձէ Մակեդոնիոյ և Հայաստանի մէջ ամէն ապստամբական շարժում խեղդել: Թիւրք կառավարութեան զօրքը և մանաւանդ Հայերը կը սպասեն անգլիական միջամտութիւն մը: Անգլիա, որ 1878ին Կիպրոսի զաշտպարութեամբ իր վրայ առաւ վերջացող արեւելեան ողբերգութեան մէջ անհնաձանք պատասխանատուութիւնը, իրեւի Պոլսոյ մէջ գործելու համար ազատ պիտի զգայ իր ձեռքը:

ԿԱԼՈՒԱՆՆԵՐՈՒ ԳՐԱՆՈՒՄ
ԵՒ
ԿԱԹՈՒԽԻՈՍԱԿԱՆ ԱԹՈՒ
ՉԵՑ
(Շար. Ասիտոյ քիւրդ)

Յոյց տալու համար թէ կաթողիկոսական աթոք տեղափոխելու խնդիրը, նոյնիսկ աւելի նպատաւոր համարուած ժամանակներու մէջ իսկ մտածուած է, մէջ կը բերենք այստեղ հարգուեցաւ Մ. Մամուրեանի 24 ասրի առաջ հրատարակած հետեւեալ տողերը, անգլիացիի մը բերով գրուած (անգլիական նամակաւ կամ հայու մը ճակատագիրը 1880), այդ գրութեամբ յայտնուի թիւրք մը ասացած է, մանաւանդ եթէ աչքի առաւ ունենանք կաթողիկոսական աթոքներէ կաթողիկոսական աթոքներէ: Ընդդէմ մենք մեր կողմէ եղած են, յեշտելու համար Մ.

ՄԹՆՁԱՂԻՆ
(Պատկերաճիւղ)
ԱՆՏՈՆ ՉԵՆՈՎ
ԹՇՆԱՍԻՆԵՐԸ
— Լսեցէ՛ք, բայց թողէք զիս — ըսաւ տիրութեամբ. «Եւ ինչ ուշ կուգամ ձեզի: Կուգեմ միայն ֆելքերը կնոթս սօս զրկել: 25՞ օր ան մենակ է» —
Ապօկինը լուռ էր: Կառքը աւազուտ եզերքին վրայ տարուբերուելով ու քարերուն ընդհարուելով, զլորուելով առաջ կերթար: Քիրիւղը վըշտով լեցուած անհանգիստ շարժումներ կը ընէր և յանկարծ շուրջը նայեցաւ: Իրենց կռակը, աստղերու դժգոյն լոյսի տակ կը նշմարուէին ճա-

նապարհը և մութին մէջ կորած գետեզրի ուռիները: Այլ կողմը լայն դաշտավայրը կը տարածուէր նոյնքան միօրինակ, նոյնքան անսաման, որքան երկինքը, անոր վրայ հեռուն հոս ու հոն՝ անտարակոյս կ'ըզակաւ ճախնուտներու վրայ՝ թոյլ կրակներ կը վառուէին: Չախ կողմը ճամբուն զուգահեռական ըլլալ մը կերկարէր, որու վրայ բազմաթիւ փոքր մացառներ աներ էին: Բլուրին վրայ կանգնած էր կիսալուսինը մեծ ու կարմիր, մշուշն և փոքր ամպիկներէն մասամբ ծածկուած: Իովանդակ բնութեան մէջ տեսակ մը յուսահատական և հիւանդազգին բան կը տրէր: Երկիրը՝ ընկած կնոյ մը պէս, որ մութ սենեակին մէջ մենակ նստած կախատի անցեալի բաներու վրայ շտամել, կը շարժարուի գարնան ու ամբար յիշողութիւններով և որ անտարբեր կը պատէ անխուսափելի ձմրան: Որ կողմին ալ որ ուզես նայել, ամենուէք բնութիւնը մութ և անսաման լուրութեամբ փոսի մը կը նմանէր, ուր-

կէ ո՛չ Քիրիւղը, ո՛չ Ապօկին և ո՛չ ալ կարմիր կիսալուսինը կրնային գործու գալ...
Բանի որոշուած տեղին կը մտնէ նային, այնքան աւելի կանհանգիստանար Ապօկինը: Նստած տեղը կը շարժուէր, առաջ կը ցատկէր, կառապանի ուսէն զէպի հեռուն կը նայէր: Երբ կատքը տան նախապաթի առաջ կեցաւ, որ նկարուած կտաւներով ծածկուած էր, ան սկսաւ ծանր շնջել և երկորդ յարկի լուսաւորուած պատուհանին նայիլ: «Երբ զօրքը զուրթիւն մը հասի, այն ատեն... այն ատեն չեմ կրնար ապրիլ» կը ըսէր բժշկի հոտ նախասնեակը մտնելով և յուզմունքէն ձեռքերը շփելով:
— Բայց բնաւ սղոթել չկայ, ուստի ամէն բան պէտք է լաւ անցած ըլլայ: «Կաւկասէր» աշխատելով լըտուութեան մէջէն բան մը կորզել:
Նախասնեակի մէջ ոչ ձայներ և ոչ ալ գայլի լսելի էին և ամբողջ առունը կ'ալմիս կը քնանար թէ եւ ոչայծառ կերպով լուսաւորուած էր: Այժմ

բժիշկն ու Ապօկինի, որ մինչեւ ցարդ միշտ մութին մէջ էին, կրնային զիրար լաւ պիտել: Թիւրք իր բարձր հասակով և զէպ առաջ ծոռու գիրքով աչքի կը նկնէր, անուշադիր հագուած էր և զէպով ոչ այնքան զեղեցիկ: Իր հաստ լուսափայլ շրթունքները տեսակ մը անախորժ վճակաւ նուրթիւն և կոշտութիւն կարտաշարուէին, աչքի կը նկնէին նայապարտուային քիթն ու անտարբեր նայուածքը: Ըր սանտրուած մազերը, որ գանգին վրայ էին թափված, երկար և նեղ մորուքին ժամանակէն սոսք ճերմակիւր, որոնց մէջէն դուրսը կերեւար, գրեթէ գորշ գէպի գոյնը և հարեւանցի անտաշ ձեւեր — կանաքի մէջ ճաշակուած այս բոլորը թըշուաւորութեան և յոգնածութեան տըպապատուութիւն կը ձգէին: Երբ մարդ անոր չօր զէպը իր ամբողջութեամբ կը դիտէր հազիւ կարելի կը թուէր թէ անիկա կին մը կրնար ունենալ և զաւակ մը համար լաւ կրնար: Սակայն Ապօկինը բոլորովին տարբեր տեղ-

Մամուրեանի հիմնական միտքերը : «Որքան անհնար հայն ինչ որ է, եւ չէ թէ ինչ որ պարտ էր լինելու եւ քննենք իր դիրքը : Իրաւի՛ եղական է աշխարհիս վրայ, եւ զարմանալի որ քիչ չատ գոյութիւն ունի ազգերու մէջ, թէ եւ այդ գոյութեան պայմաններն՝ ժամանակին հետ չը փոխուելով՝ կրնան սկարանալ եւ իրենց պահպանողական յատկութիւնը կորուսելով՝ չգոյութեան տունիլ : Ստուգելու հայր զաղթելով՝ Թուրքիոյ զանազան գաւառներն, Եւրոպա եւ Հնդկաստան՝ կը փոխէ տէր ու ստիւրութիւն, կը փոխէ կեանքն ու լեզուը, կը փոխէ հողուտան ու դէմքը, կը փոխէ միտք ու կարծիք : Բայց եթէ լուսն պարագաներէ չը բռնաբառուի, պարագաներ որ կրնան պատահիլ թէ՛ բարբարոս եւ թէ՛ քաղաքակիրթ երկիրներու մէջ, չը փոխուի իր դասականքը, չփոխուի իր կրօնք եւ ուր որ գաղթի իր հետ կը տանի եկեղեցին կամ անոր մասունքը, ուր որ հասնի աչքը կը դարձնէ չէթէ Հայաստան, այլ այն հայրապետին կամ առաքելական կոչած Աթոռին՝ որ էջմիածին կը գտնուի : Կան իւրեք, Անդլիացի, արաբացի, պարսիկ, Ֆրանսացի հայեր, որ՝ եթէ գլխովին ամուսնական կամ քաղաքական յարաբերութեանց շնորհիւ օտարացած չեն, կը խանդավառին այն էջմիածին համար, որու շէնքը ճրգատ թագաւորը շինած, Լուսաւորիչը օրհնած եւ Միածին լուսաւորած է, կըսեն : Իրենց բոլոր հին պարծանքներէն այս հայրապետական աթոռը մնացեր է : որ ոչ միայն իբրև ուր հողերու, այլ քաղաքական փառաց ու աննշանաց նշանակն է :

Աւրդ՝ կրօն փոխել՝ հայութիւն արանալ է էջմիածնայ ջերմ Հայոց համար, որ ուրիշ քաղաքական պատճառ ունի այդ աթոռը պինդ բռնելու : Միջոց մըն է այն, կրօնական արդի թոյլատուութեան շնորհիւ, բոլոր հայերն, ո՛ր ահբեթեան ներքեւ որ գտնուին, բարոյապէս համախմբուելու եւ անոր շուքին ներքեւ գանազան արտօնութիւններ վայելելու : Կաթողիկոսն իրաւունք ունի իշխուել իր ցիրուցան հօտին վրայ եւ անոր հողերու հրահանգ ու մխիթարութիւն ուղղելու, իրաւունք ունի դաւանանքի կնճառա խնդիրներ լուծել ընդհանրական ժողովներով, ուր աչ-

խարհականներ, եւս կրնան բազմիչ եւ այս՝ Հայաստանի եկեղեցւոյ հրեանութեան մէկ նշանաւոր ապացոյցն է, այնպէս որ ամէն խրճահար ու թոյլատու տէրութիւն պարտաւոր է հայոց հողերու բարձր իշխանութիւնը յարգել, մի քանի պայմաններով եւ անոր յարաբերութեանց չմիջամտել : «Եւրոպական կամ հողերու իշխանութեան ճնշակուն կողմն է այս, բայց զո՞նք աստիճան գրգռով՝ միթէ իրօք էջմիածին կը վարէ՞ այդ հեղինակութիւնը՝ բոլոր հայոց վրայ թէ ոչ լոկ անուանական է այն :

«Ահա այստեղն է խնդրոյն ամենէ փափակ մասը, զոր եթէ կարենամ պարզել, հարցմունքիդ պատասխան ասած պիտի լինիմ : Արդ՝ քանի որ էջմիածին հայոց կերպ մը ազգային նշանաբանը, կամ լաւ եւս ըսեմ, ազգայնութեան գրօշակն է, այն տէրութիւնն որ այդ գրօշակը ձեռք պիտի ձգէր, բոլոր հայերն ալ՝ եթէ ոչ նիւթապակ՝ բարոյապէս ձեռք ձգած պիտի լինէր : Եւ արդարեւ՝ պատմութեանց կիմանանք որ ամեն օտար աշխարհակալ նպատակն եղած է այն, որ մերթ Պարսկին, մերթ Արաբացւոյն, մերթ Յոյնին, վերջերս Տաճիկներուն եւ մեր օրերը Թուրքուսն որս ընկած է : Սակայն «հին հայերն՝ որ աւելի քաղաքակց մարդիկ կերելն քան թէ նորերն», ամէն անգամուն որ էջմիածնայ եւ անով եկեղեցւոյ վստանքը տեսեր են, զայն յողի՛ր եւ կաթողիկոսն, իբրեւ կրօնի ներկայացուցիչ, «փոխարդր են անդէ տեղ», եւ սովորաբար ընտրեր են այն կողմերն ուր գտնուին աւելի ազատութիւն : Այս ոչ միայն քաղաքակցութիւնն այլ լուսամտ հաւատաւորի գործ էր, վասնզի՛ հաւատն աւելի սրտի մէջ պէտք է փնտռել ու գործել զան թէ քարի ու տաճարի մէջ : Կերելի թէ հայոց այս կրօնական նախնադասութիւնն զաղբեր է այն օրն որ էջմիածին քրիստոնեայ աշխարհակալի գաւազանին տակն է մնացեր : «Միթէ կարելի՞ էր որ քրիստոնեայ պետութիւն մը քրիստոնէութեան զէմ դարան լարէր, Այս րանը անհաւատալի կը թուէր հայուն, թէ եւ յայնին օրինակն ունէր եւ շէր կարող մտածել իր պարզմտութեամբն, որ կրօնն ու ամէն սուրբ բան պիտի նւապատակի մը հասնելու գործի կրնար

դառնալ հնարագէտ քաղաքականութեան մը ձեռքը : Հետեւապէս Թուսիոյ կառավարութիւնն հետզհետէ կը կայէ ու կը կաշկանդէ այդ էջմիածինն ու իր գործակալը եւ անոնց իրաւասութիւնն ու արտօնութիւնները կը սեղմէ՛ այս բանաւոր փաստին վրայ յնչով՝ որ իր սեփական օրէնքն ամէն քրիստոնեայ հասարակութիւն նոյն չափով կը չափէ : Այսպէս հայք եւս իրենց չափն ասած կերելին եւ աթոռ ու աթոռակալ նշանակութիւն չունին ոչ իսկ հողերու պէս : Վասնզի այդ իշխանութիւնը լոկ անուանական է եւ կը գործածուի միայն քաղաքական նպատակի եւ հայոց բարի տրամադրութիւններն զէպի Թուսիա դարձնելու համար, մինչեւ որ էջմիածին վիճիկն անջքանայ եւ առական եւ պիտկոպտութեան մը վերածուի՝ հայանունն Աթոռակալով մը եւ կրօնական միարարութեան զազափար՝ որ արդէն կընդունարուի, բոլորովին իրազործի» (25 տարի առաջ Մ. Մամուրեանի գրեւորութիւնը այժմ իրականանալու վրայ է) :

Թախտիկ (Շարունակելի)

Պ. Բիւի-ԳիթՅԱՒ ԵՒ ՏՕԲԻՒ ԼՕՐԻՍ ՄԵԼԻՖՕԼ ՖԻԼԻՊԷԻ ՄԷՋ

Հայկ. դատի քաջարի պաշտպան Բիւի-Գիթյաւի եւ Եւրոպայի մէջ իր ըրած փրօքական դարձր զգործով յայտնի մեր յարգելի ընկեր տօթթ. Լօրիս Մելիֆօլի Ֆիլիպէ գալու լուրը — զոր հաղորդեց Սօֆիայէն ընկեր Պիտեան — անմիջապէս տարածուեցաւ քաղաքին մէջ : Հետաքրքիր հասարակութիւնը անհամբեր կսպասէր կիրակի օրուան : Ֆիլիպէի Գաղտնիկական ընկերները հարկ եղած նախաձեռնութիւնը բոլոր արժանի ընդունելութիւն մը ընելու համար, եւ մխիթարական էր տեսնել, որ մեր հարուստներն ալ եկան պարտականութեան բաժին մը վերցնել մասնակցելով աս գործին : Կագուած կարգադիր Մամուրեան մը յայտարարութիւնն ցրուեց հասարակութեան մէջ, նոյնը լրաւ Ֆիլիպէի Մակեդոնական կօմիտէն, որոնց երկուքն ալ կը հրաւրէր հասարակութիւնը՝ կիրակի օր, 9 փետրուար երթալ կայարան եւ զիմաւորել տաւապողներու դատին նուիրուած սասարի արտեանները : Որոշուած ժամուն երեք հազարէ աւելի բազմութիւն մը փութացած էր կայարան անցուցործը անկարելի ընելու աստիճան խոնուած : Երգեկանքը գալուն պէս, յարգելի հիւրերը իջան Պ. Պիտեանի հետ եւ առաջնորդուեցան պիւթէն : Երգեցիկ խումբը, հասարակութեան կողմանէ կարգադիր Մամուրեանի քանի մը ազգայինները, Մակեդոնական կօմիտէի կողմէ երկուքն ալ անձաւորութիւններ փութացին բարի գալուստ մաղթել : Ողբերուած եւ հետաքրքիր հասարակութիւնը ճիգ կընէր ներս գալու, չի նայած որ կը խնդրուէր անհանգիստ չընել հիւրերը : Երգեցիկ խումբը երգեց հոն «Հայ եղբայրներ» : Պ. Պիտեան իր ինդակցութիւնը յայտնելով ըսաւ որ — գաւա Պուլխարիոյ մէջ երգուած հայերէն երգերը օր մը անշուշտ պիտի երգուին ազատ Հայաստանի ինչպէս նաեւ Մակեդոնիայի մէջ : Հասարակութիւնը անընդհատ սուտաններով կարտայայտեց իր շնորհակալութիւնները : Կարճ հանգիստէ մը ետք, յարգելի հիւրերը առաջնորդուեցան օթիլ Մէթրօքօլ : Ճանապարհին հիւրերը ստիպուած էին անընդհատ բարեկէր ցրուող հասարակութեան յարգանքներուն ի պատասխան : Կայարանէն միջոցաւ հարախի պարտէզը՝ պողոտային երկու կողմի ալ հասարակութիւնը լեցուն էր : Իրիկուան զէմ հիւրերը Գաղտնիկական ընկերներու հետ քաղաքին աչքի զարնող տեղերը պատեցան, ինչպէս նաեւ երկուշաբթի առտու այցելեցին հայ մասնաւոր վարձարանը, որուն մասին իրենց լաւ տպաւորութիւնը յայտնած են առանձին, այցելեցին Հայոց եւ Լատինաց եկեղեցիները, մեր թաղային վարձարանը, սս վերջինին մասին ալ գիտողութիւնները բրած են առանձին : Կիրակի գիշեր ի պատիւ հիւրերուն արուեստաւ բաւական ճոխ հացկերոյթ մը, քոսնէն աւելի հայեր ներկայ եղած են. իսկ Մակեդոնական կօմիտէի կողմէ մէկ անդամ : Պ. Պ. Ֆիլիպէան Ֆրանսերէն գե-

կութիւնը՝ կիրակի օր, 9 փետրուար երթալ կայարան եւ զիմաւորել տաւապողներու դատին նուիրուած սասարի արտեանները : Որոշուած ժամուն երեք հազարէ աւելի բազմութիւն մը փութացած էր կայարան անցուցործը անկարելի ընելու աստիճան խոնուած : Երգեկանքը գալուն պէս, յարգելի հիւրերը իջան Պ. Պիտեանի հետ եւ առաջնորդուեցան պիւթէն : Երգեցիկ խումբը, հասարակութեան կողմանէ կարգադիր Մամուրեանի քանի մը ազգայինները, Մակեդոնական կօմիտէի կողմէ երկուքն ալ անձաւորութիւններ փութացին բարի գալուստ մաղթել : Ողբերուած եւ հետաքրքիր հասարակութիւնը ճիգ կընէր ներս գալու, չի նայած որ կը խնդրուէր անհանգիստ չընել հիւրերը : Երգեցիկ խումբը երգեց հոն «Հայ եղբայրներ» : Պ. Պիտեան իր ինդակցութիւնը յայտնելով ըսաւ որ — գաւա Պուլխարիոյ մէջ երգուած հայերէն երգերը օր մը անշուշտ պիտի երգուին ազատ Հայաստանի ինչպէս նաեւ Մակեդոնիայի մէջ : Հասարակութիւնը անընդհատ սուտաններով կարտայայտեց իր շնորհակալութիւնները : Կարճ հանգիստէ մը ետք, յարգելի հիւրերը առաջնորդուեցան օթիլ Մէթրօքօլ : Ճանապարհին հիւրերը ստիպուած էին անընդհատ բարեկէր ցրուող հասարակութեան յարգանքներուն ի պատասխան : Կայարանէն միջոցաւ հարախի պարտէզը՝ պողոտային երկու կողմի ալ հասարակութիւնը լեցուն էր : Իրիկուան զէմ հիւրերը Գաղտնիկական ընկերներու հետ քաղաքին աչքի զարնող տեղերը պատեցան, ինչպէս նաեւ երկուշաբթի առտու այցելեցին հայ մասնաւոր վարձարանը, որուն մասին իրենց լաւ տպաւորութիւնը յայտնած են առանձին, այցելեցին Հայոց եւ Լատինաց եկեղեցիները, մեր թաղային վարձարանը, սս վերջինին մասին ալ գիտողութիւնները բրած են առանձին : Կիրակի գիշեր ի պատիւ հիւրերուն արուեստաւ բաւական ճոխ հացկերոյթ մը, քոսնէն աւելի հայեր ներկայ եղած են. իսկ Մակեդոնական կօմիտէի կողմէ մէկ անդամ : Պ. Պ. Ֆիլիպէան Ֆրանսերէն գե-

ուներ : Ան գեր, հաստատուն խարտեալ մարդ մըն էր, մեծ գլխով գիւղացիական, բայց մեղմ գիւղացիներով եւ ըստ վերջին նորաձեւութեան հօգուած կը, իր հանդիսաւոր պիւթի, լաւ կոճկած թիկնոցի, բաշի եւ դէմքի մէջ տեսակ մը ազնուութիւն կար, կը քալէր գլուխը բարձր բռնած եւ կուրծքը գուրս, կը խօսէր հաճոյալի միջակ ձայնով եւ այն ձեւերով՝ որով զլիարկը հանեց եւ գլխի մագերէ շրտկեց, ցոյց կուտար գրեթէ կնոջական պիւճութիւն մը : Նոյնիսկ այն դէպքերուն թիւնը եւ մանկական վարիք, որով հանուելով սանդուխներէն զէպի վեր կը նայէր իր շուքը չէին խանգարէր եւ չէին պակսեցնէր ա՛յն, առողջ եւ ազնուական վարմունքը, որով ողորուած էր իր ամբողջ կերպարանը :

— Մարդ չկայ, ո՛չ ալ ձայն — կրէր սանդուխներէն վեր բարձրանալով : — Որ եւ է փրօքուեցում չկայ այստեղ, Տայ Աստուած թէ ամէն բան

լաւ անցած ըլլար : —

Բժիշկը նախասենեակէն ընդարձակ դանդի մը տառնորդուեցաւ, ուր սեւ զաշնակ մը աչքին գորիաւ եւ յայտնող ճերմակ կտաւով ծածկուած այս մը կախուած էր : Այստեղէն աննք մը տան փոքր, ասիւրիկի եւ սրտուն հիւրասենեակ մը, որ ողորուած էր զուրեկան վարդապոյն աղօտ լցսով : — Առ այժմ աստեղ նստեցէք — ըսաւ Ապօկին : «Իսկ ես... եպ կուզեմ իսկոյն... երթալ նայիլ եւ ձեր գալը յայտնել :»

Քիրիով առանձին մնաց, Հիւրասենեակի շքեղութիւնը, գուրեկան վարդապոյն աղօտ լցսը եւ իր ներկայութիւնը մէկ օտար, իրեն անձանթ տան մէջ, որ արկածի մը քնաւորութիւնը կը կրէր — այս բոլորը իրեն անտարբեր կերեւային, նստած էր ան աթոռի մը վրայ եւ թթուատն ալրած ձեռքերը կը գնէր : Հարեւանցի կերպով միայն զիտեց վարդապոյն լուսաւորուած լուսափոփը : Ընթաթակի մը տուփը եւ այս ուղղութեամբ նա-

յելով նկատեց լեցուած գոյլ մը, որ նոյնքան յագեցած եւ հաստատուն կերեւար, որքան ինքը՝ Ապօկին :

Բժիշկը շուրջը լուս էր... Ժօտակայ սենեակներէն մէկուն մէջ որ եւ է մէկը բարձր ձայնով «ահ» — կըսէր, վերջը սպակեայ գուռ մը շտուշեց՝ հաւանօրէն պահարանի մը գուռը — եւ յետոյ դարձեալ տիրեց լուսութիւն : Քիրիով հինգ վարկեան սպասեցէն յետոյ դարձեալ ձեռքերը գնէրէն եւ աչքերն յառեց դրանը, ուրկէ Ապօկինը աներեւոյթացի էր : Այս դրան սեմին վրայ կանգնած էր Ապօկինը, բայց ոչ նոյնը, որ դուրս կը գնացեր իր գոհ եւ պիւճ տեսքը այնեւ վրան չէին, իր դէմքը, ձեռքերը եւ գիրքը նողկալի գալարու մի երեւոյթին էին ստացեր՝ մասամբ սարսափ, մասամբ տանջանք եւ ֆիզիքական ցաւ յիշեցնելով... Քիրիւ, շրթունքները, պիւսիքը, ամբողջ դէմքը շարժման մէջ էր, կարծես ամէն մաս կուզէր դէմքէն բաժնուել, աչքերը սակայն կը խնդային, երեւի ցաւէն... Ապօ-

կինը ծանր ու մեծ քայլերով հիւրասենեակի մէջտեղը գալով՝ ծանցաւ ու հաւանջելով բուռնցքներով սպասուական շարժումներ սկսաւ ընել :

— Սարտած — աղաղակեց շեշտելով բառին վերջին վանկը :

— Ան զիտ խաբէր է, անկեա զիտ լքեր է : Ան հիւանդացաւ եւ անէն ինձ քիչկի գրկեց միայն անոր համար, որ հնքը այս Փափշիւսկիի հետ փախչի, ո՛, Աստուած իմ — Ապօկին դանդաղօրէն գէպի բժիշկը քայեց, իր ճերմակ ու քնքուշ բառեցները անոր երեսին մօտեցնելով՝ շարունակեց կսկծած, ձեռքերը շարժելով :

— «Անկեա գիտ քեց, խաբեց, ի՞նչ կը նշանակէ այս կեղծիքը, Աստուած իմ, Աստուած իմ՝ ինչ կը նշանակէ այս աղտոտ սրիկայական ճարպիկութիւնը, այս տատանայական, խորամանկ խաղը : Ես ինչն ի՞նչ ըրի : Անկեա զիտ լքեց :» —

(Շարունակելի)

զեցիկ բաժակաճառ մը կարգացած է, որուն Պ. Գիլյան պատասխանած է գրեթէ հետեւալ մտքով. «Ձեզ կոտորեցին, որովհետեւ զուք արեւելքի մէջ Եւրոպական քաղաքակրթութիւնը տարածող միակ ազգն էիք: Ձեզ կոտորեցին, որովհետեւ Եւրոպական ձեզի Պերլինի Յարգ. յօդուածով իրաւունքներ սուսաւ և չի յարգեց իր խոստումը: Ձեզ կոտորեցին, որովհետեւ զուք ձեր իրաւունքները պահանջեցիք: Այս հիմա, մենք պիտի աշխատինք մեր բոլոր ոյժովը ձեր ստատուող ազգի դատին ի նպաստ, միեւնոյն ատեն քաւելու համարձմեր — Եւրոպայի — յանցանքը:»

Պ. Կրօն Միջաշէլեան գովասանական ճառ մը կարգացած է առջիկ. Լօրիս Մեղիքովի ուղղուած, վերահանելով անոր մեծութիւնը: Ասով Կրօն Միջաշէլեան եկաւ կենդանի փաստը ճշտելու, թէ՛ որքան ալ ինք կամ իրենն պէս ստածողներն ու գաղափարակիրները հայհոյեն, խճճեն Իսաչանկեան գործիչները այս կամ այն յայտնի կամ միջին հաշիւներով և սակայն կը ներկայանայ անանկ առիթներ, ուր այլեւս կը հարկադրուին ճշմարտութիւնը խօսելու, կը խպնին ձերմակին նորէն սեւ ըսելու:

Պ. Կրօնի այդ քայլը նկարագրի տեսակէտով ալ աչքի զարնող բան մըն է:

Մեր յարգելի ընկեր առջիկ. Լօրիս Մեղիքով պատասխաններ է քանի մը խօսքով:

Պ. Պիօնեան իր կարգին երկու խօսքով կը պարզէ մեր հայեցակէտը: Ճաշկերոյթը բաւական լաւ կանցնի թէեւ, բայց կրնար աւելի կենդանի անցնել, եթէ չի սեղմուել թէ՛ մը չափէն աւելի սճեակահանութեանն ու պօշտօնականութեանն մէջ, և մասնակից լլար հոն երիտասարդութեան քիչ մը շատկեղ անհասներ, աիկիններ, պարագայ մը, որ կարծեմ հրեանքը առանձին զիտել տուեր են ընկեր Պիօնեանին: Այս յետոյ, իմ կարծիքով, լաւ կըլլար մկէ աւելի պուրկարներ իրաւիտեղ սեղանին: Աստուք առիթներ են, որոնք մեր և անոնց միջեւ գոյուլիւն ունեցող յարաբերութիւնները կամ կապերը աւելի կամրացնեն, աւելի կը ստանցնեն, աւելի կը մօտեցնեն սեղ ըրարու:

Այսպէս թէ այնպէս, աչքի առջեւ ունենալով աս զործին մէջ սեր հարուստներէն ոմանց գալ մեզի գործակցելիւն և ստանձնած պարտականութիւններն, կրնանք առնոց մէջ տեսնել զարթուած բաւական միջիտարական նշաններ և սեպիլ ափ առաջին քայլերէն մէկը: Սիւրտ իրենց հետ կըլլանք, ձեռք կերկնցենք, երբ տրամադրութիւն ունին բան մը ընելու, շարժելու, որքան կը թոյլազրէ իրենց պայմանները:

Երկուշաբթի օր ժամը 11ին ատենները, կայարանը կրկին կար բաւական բազմութիւն:

Յարգելի հիւրերուն ներկայացուցաւ հոն անմօտանալի Սիրէմեանի հայրը, որուն սրտապնդող խօսքեր ուղղեցին Պ. Գիլյան և առջիկ. Լօրիս Մեղիքով, որոնք թարգմանուեցան Պ. Պիօնեանի կողմէ:

Հերերու սեկնելու պահուն Յիլիպէի Դաշնակցական երիտասարդներու կողմէ արուեստ երկու պոսիկ նուէրներ իրրեւ յիշատակ:

Սրգեցիկ խումբէն հոն ներկայ եղող ընկերները երգեցին «Թող կորու-

չին»ը, իսկ գրեթէ ամբողջ հայ ներկաները՝ երգեցին խանդավառութեամբ «Լ՛՛՛ Լ՛՛՛ Լ՛՛՛»ն ...

Ընկերական տաք համայններէ բարեկամական շնորհ բարոյներէ նաք մեկնեցան հիւրերը զեցցոններով, թողով իրենց ետեւ մեծ ոգեւորութիւն և յարգանք դէպի իրենց պատկառելի անձնաւորութիւնը և՛ իրենց աշխատած գործը ...

Ժիրայր

Յիլիպէ
12 փետր 1904

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՒՆԻԿ

Խարբերդի մէջ արձակուեր են քանի մը բանտարկեալ հայեր:

—Վանի ամբիկեան միսիօնարը համաձայնէր է հայ որբերը զատարակել ըստ հայ էկեղեցոյ կանոններուն:

—Տիպիսի կուստտանի մայրապետը 90 տարեկան հասակին մէջ մեռեր է:

—Ներսէս եպս. Սալանեան Պօլսոյ կէտիկ փաշայի եկեղեցիին քարոզիչ կարգուած է ...

—Իտալի մէջ յանձնախումբ մը կազմուած է այնտեղի հայ բարեգործ. ընկեր. տարեկան երեկոյթը տալու համար:

—Պօլսոս բաշա Նուպար 20,000 Քր. նուիրած է Գահիրէի մէջ ազգային նոր վարժարան մը շինելու համար և որդեգրած է շատ մը աղքատիկ աշակերտներ:

—Կ. Պօլսոյ ուսուցչաց օգնութեան սնտուկի նմխատեսած 6000 Քր.ի զբաղաւորելը կազմուած ըլլալով հոգաբարձութիւնը սկսած է իր գործունէութիւնը:

—Պօլսոյ հրապարակին վրայ յայտնի հայ գերասան Մնակեան մեռած է:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սօփիայէն ունիօրմացիօնի կը գրեն, որ պուրկար կառավարութիւնը յիշ. խումբերու արշաւանքը տրգիլելու համար Գիւստէնտիլէն մինչեւ Պուրկազ: 30 քիլոմէթր տեղ վերածած է գին. ուորական ոահմանագծի մը: Սահմանագծի պաշտօնեաները հրտման ստացած են խոտիւ հակողութիւն ընել և արգիլել զէնքի դուրս կամ ներս փոխադրութիւնը, ձերբակալել կասկածելի մարդիկը, եթէ զէնք ունին զանոնք զինաթափ ընել: Այս քաղաքականութեան ոյժ տուած է նաչովի իր վերջերս Սօփիա զրտնուած միջոցին: Պուրկարիա կուզէ ներկայ տաղնապի օրերուն մէջ խաղաղութիւնը պահպանել:

Կառավարութիւնը Ալպանիոյ և Հին-Սերպիոյ մէջ առաջ եկած շարժումներուն մասին ստոյգ տեղեկութիւն ստանալու համար Սօփիա հրաւիրեց Չիթիլիէի իր գործակատար Ռիզով, որ մակե-

ղոնացի մըն է և լաւ տեղեակ ըլլոր անց ու գարձերուն:

—Սօփիայի ուսանողութիւնը կը պատրաստուի շքեղ ընդունելութիւն ընել Սերպ ուսանողութեան ներկայացուցիչներուն առով իրենց ելրայրակցութիւնը և համերաշխութիւնը ուժեղացնելու համար: Էւրօքանչիւր ուսանող յանձն առած է որոշ գումար մը վճարել ըլլալիք ծախքերուն համար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍ—ՃԱՌՈՆԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱՉՄ

Ռուսերուն յաղթական ցնծութիւնը՝ ուրախութիւնը խելճերուն փորը մնաց:

Փետր. 24ին լուր տարածուեցաւ թէ Բորթ-Արթուրի առջեւ Ռուսերը տարած են ծովային մեծ յաղթանակ մը և ընկղմած 4 ճարտական մարտատուեր ու երկու թօրբէտօներ: Լուրը բարեբաղդաբար շուտով հերքուեցաւ: Ահա իրողութիւնը:

Փետր. 24ի գիշերը ճարտնացիք փորձած են Բորթ-Արթուրի առջեւ իրենց մէ պայթուցիկ նիւթեր պարունակող նաւեր ընկղմել առով նեղուցին անցքը փակելու և Ռուսական տորմիզը նաւահանգիստին մէջ արգիլելու համար՝ ճիշդ ինչպէս Սպանո. Ամերիկեան պատերազմին տեսն ամերիկացիք ըրին: Այս յանդուգն ծրագիրը յաջողած է ընկղմած նաւերը լեցուած են եղեր քարերով, նաւաստիները ամէնքն ալ ազատու են: Յիշեալ նաւերը երեւելուն պէս ամբողջութեամբ և Բէտովիզան զըրահաւորը կրակ բանալով ընկղմած են նաւերը և առով իրենք օդնսծ են ճարտնացիներուն ծրագրին յաջողման:

—Լամտօրֆ շրջաբերական մը հաճելով նորէն բողոքած է, թէ ճարտնացիք գործած են միջազգային օրէնքներու դէմ յարձակելով Չէմուլքօի ռուս զրահաւորներուն վրայ, որոնց մէջի սպաները յարձակութիւններու խըզուէն անտեղեակ են եղեր: Լախելք. ուրեմն ճարտնացիները առաջուրէն իմացնելու էին, թէ յարձակում պիտի գործեն, ռուսերը պատրաստ ըլլան:

—Ալէքսիլի Մանչուրիոյ մէջ յայտարարած է, որ ռուսական զօրքերուն աջակցութիւն չի ցուցնող տեղերը ընալինչ պիտի ընէ: Ռուսական բանութեան նոր ձեւ մըն ալ հա:

—Ներքին գործոց նախարարի խորհրդով խիտ հակողութեան, այսինքն տեսակ մը պաշարման գրութեան երթարկուած են Կովկասի Թիֆլիս և Սիպերիոյ Թօլսք նահանգի քանի մը

գաւառները: Առաջինէն՝ Ախալք, Ախալքալար, Եօրթալինսք, Երկրորդէն՝ Թօմսք:

—Պէրնի (Չօիցերիա) մէջ 400 ռուս ուսանողներ և ուսանողուհիներ ժողով գումարելով կոչով մը հրաւեր կարգացած են ռուս յեղափոխական տարբերուն՝ զէնք բարձրացնել և պատերազմէն օգտուելով տապալել ցարիզմը: Վիէնայի սլավ սօցիալիստները բրած են նոյնպէս հակառուսական ցոյց մը:

—Վիէնայի մէջ սլավօնական ուսանողները ունեցած են մեծ ժողով մը և բողոքած ռուս կառավարութեան դէմ: Ընդունուած բանաձեւը կը վերջանայ «անկցի» Ռուսիան, կեցցե՛ ռուս յեղափոխութիւնը, խօսքերով: Ինքուր յաղապաններով և սուրբնեքով Վիէնայի ռուս դեպիստանտան առջեւ ըրած է հակառուսական ցոյց մը: Ձերբակալուած են քանի մը ցուցարարներ:

—Ալէքսիլի ռուսները կախիտուած է երբք ճարտնական սպաներ, որոնք ծպտուած կուղէին կամօրջ մը օդը հանել:

—Բօրէա հոշակուած է ճարտնիոյ հարկատու երկիր, որուն վրայ արդէն կարգուած ճարտնական փոխարքայ մը:

Գօրէայի զօրքը զէնքի տակ առնուած է և ճարտնացիներուն հետ միասին պիտի գործէ ըստ կէքուած նիզակակցութեան մը: Այս միջադէպը միասնայի մէջ առաջ բերած է գժգոհութիւն:

—Կարեւոր զօրքականներ շինական կառավարութեան գիմելով պահանջած են ճարտնիոյ հետ նիզակակցութիւն մը կնքել ընդ դէմ Ռուսիոյ:

—Վատիկանութեան հարկոնին վրայ երեւցած են ինը ճարտնական նշաներ, սպացոյց մը, որ ճարտնացիք ինքզինքնին ծովուն վրայ բոլորովին ապահով կըզգան:

—Ալէքսիլի Մուկտէն հասած է:

—Հարաւային Ռուսիոյ համար սարաններու ուսանողները երկու բանակներու բաժնուած են՝ ընդգիմադիրներ և հայրենասէրներ: Առաջինները կուղեն ներկայ առիթէն օգտուելու և խառնութիւններ հանել, երկրորդ խումբը կուզէ պետութեան շահերը պաշտպանել: Երկու խումբերու մէջ բողոքներ տեղի տնեցած է: Ուսիկանութիւնը չէ միջամտած:

—Օտէսայի մէջ արգիլուած է պատերազմի առթիւ հաւաքական ցոյցեր ընել: Որովհետեւ առիթէն օգտուելով յեղափոխականները ցրուած են հակակառավարական թաւցիկներ:

ОТГОВОРНИКЪ
Мурадъ-Ераносянъ
Педатнича, Взаимность Варна